ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ԴՎԻՆԻ IX ԴԱՐԻ ՋՆԱՐԱԿԱԾ ԽԵՑԵՂԵՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Հայաստանի և Անդրկովկասի միջնադարյան ջնարակած խեցեղենի, մասնավորապես նրա վաղ ձևերի առաջացման և զարգացման հարցերը հնագետների ուսումնասիրության լուրջ առարկա են դարձել։ Վերջին տասնամյակներում այդ ուղղությամբ աշխատանքներ են կատարվել Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում[1]։

Հայաստանում ջնարակած խեցեղենի գիտական ուսումնասիրությունը գերազանցապես կապվում է արհեստավորական խոշոր կենտրոն, միջնադարյան Դվին քաղաքի պեղումներից հայտնաբերված նյութերի հետ, որոնք հնարավորություն են ընձեռում դիտել ջնարակման տեխնիկայի զարգացման փուլերը IX—XIII դարերում։

Դվինը, լինելով խոշոր առևտրա-արհեստավորական կենտրոն, տնտեսական և մշակութային սերտ կապեր ուներ Մերձավոր Արևելքի քաղաքների հետ և իր զարգացման մակարդակով ընթանում էր նրանց համաքայլ։ Զարգացման այդ ընդհանուր փուլում Դվինը նույնպես կազմակերպեց ջնարակած խեցեղենի արտադրություն, իր ուրույն տեղական կնիքը դնելով նրա վրա։ Դվինի IX դարի ջնարակած խեցեղենի քննությունը, հետևաբար, ընդհանուր շղթայի մի օղակի բացահայտման նշանակություն է ստանում։

1964 թ. վերսկսվեցին պեղումները Դվինի կենտրոնական թաղամասում և շարունակվեցին հետագա տարիներին։ Հայտնաբերված նոր նյութերը հնարավորություն են ընձեռում պարզություն մտցնել IX դարի նյութական մշակույթի, հատկապես խեցեղենի արտադրության հետ կապված մի շարք կարևոր հարցերում[2]։ Պեղումների ընթացքում բացված մեծ շինությունը, որ իր բնակելի և տնտեսական բաժիններով կառուցվել էր արաբական տիրապետության վերջին շրջանում (VIII դարի վերջում), հիմնովին ավերվել է 893 թ. երկրաշարժի ժամանակ, որից հետո այլևս չի օգտագործվել։ Ուստի այդ շերտը հստակ թվագրվում է ինչպես նշված հանգամանքով, նույնպես և VIII—IX դդ. արաբական մի քանի տասնակ դրամներով։

Ջնարակած խեցեղենը, որը գերազանցապես բուրս է եկել շինության տնտեսական բաժնի խոշոր կոնաձև հորերից, թվագրվում է IX դարի երկրորդ կեսով, վերին սահմանն ունենալով 893 թ.։

Քննենք այդ նյութերն առանձին-առանձին։

Հայտնաբերված ջնարակած խեցեղենը բաժանվում է երկու մեծ խմբի՝ տեղական և ներմուծված։ Տեղական խեցեղենն իր հերթին հանդես է գալիս մի քանի ձևերով։

Բազմազույն ջնարակած խեցեղենի նախնական ձևերը ներկայացված են գերազանցապես ոչ խորը պնակներով, փոքրիկ թասերով և այլ տիպի անոթներով (աղ. I)։ Նրա կարազարդումը կատարվել է հիմնականում ճերմակ գույնով՝ մուգ դարչնագույն, վառ գեղեցիկ և կանաչ։ Ջնարակման այս եղանա-

---

1 Կ. Հաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952։ Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հատ. I, Երևան, 1958։ Б. А. Шелковников, Керамика и стекло из раскопок гор. Двина. Հայաստանի պետ. պատմական թանգարանի «Աշխատություններ», հատ. IV, 1952։ Նույնի՝ Поливная керамика из раскопок гор. Ани. Ереван, 1957։ Տե՛ս նաև նույն հեղինակի հոդվածները՝ «Տեղեկագիր» Ակադեմիայի, 1940, № 4—5 և 1942, № 6, В. В. Джапаридзе, Керамическая промышленность Грузии X—XIII вв., Тбилиси, 1956 (վրացերեն, ռուսերեն ամփոփումով)։ З. Майсурадзе, Грузинская художественная керамика XI—XIII вв., Тбилиси, 1954; А. Л. Якобсон, Художественная керамика Баилакана. Материалы и исследования по археологии СССР, 67, 1959; Նույնի՝ Археологические исследования на городище Орен-Кала в 1957 г., 133, 1965.

2 1964—1965 թթ. պեղումների նկարագրությունը և շերտագրական դիտողությունները կատարվել են հեղինակի „Раскопки центрального квартала Двина в 1964 и 1965 г.г." հոդվածում, տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 1։

կը ունի մի շարք առանձնահատկություններ։ Նկարագարդումը նախ կատարվել է խեցու վրա և ապա՝ պատվել։ Թափանցիկ ջնարակով։ Նկարը, ըստ երևույթին, արվել է թաց խեցու վրա և կրկնակի թրծվել։ Զարդարման այս ձևն արդեն խոսում է այն մասին, որ տվյալ տիպի ջնարակումը շատ նախնական է և համապատասխանում է ջնարակած խեցեղենի սկզբնական փուլին։ Այս տեխնիկան լայն տարածում ուներ Միջագետքում և պատահական չէ, որ նման կատարումով անոթները էոնստ Կյուհնելը թվագրում է IX դարով[3]։

Տեխնիկական տեսակետից մի բայլ առաջ էր անոթների ներքին մակերեսի անգոբումը, մակերևույթն ավելի հարթ և նկարն ավելի ցայտուն դարձնելու նպատակով։ Շատ հավանական է, որ այս ձևերը հանդես են եկել միաժամանակ։ Բացառված չէ, որ անգոբով պատելը, որը պայմանավորված էր ջնարակած անոթների արտադրության զգալի զարգացմամբ, երևան է եկել բիչ ավելի ուշ, քան նախորդ ձևը։

Մեծ բանակությամբ այս տիպի խեցեղեն է հայտնաբերվել Դվինի կենտրոնական թաղամասում, որն ավերվել է 893 թ. երկրաշարժի ժամանակ և հետագայում շատ թույլ է բնակեցված եղել։ Նույն տեղից մեծ բանակությամբ նման խեցեղեն է հայտնաբերվել Խաչիկ Դադյանի պեղումների ժամանակ (1907—1908 թթ.), դրանք հետագայում տարվել են Զվարթնոց և ցուցադրված են Զվարթնոցի թանգարանում։ Ըստ երևույթին, Դվինում, սկսած IX դարի ա-



Աղ. 1

[3] Ernst Kühnel, Islamische Kleinkunst, Berlin, 1925, էջ 76-78, նկ. 36-37։

ոաջին կեսից, եռագույն խեցեղենի արտադրությունը (թաց կավի վրա, առանց անդորի և անդորով) լայն ծավալ էր ստացել։ Դվինի կենտրոնական թաղամասի պեղումները և շերտագրական դիտողությունները թույլ են տալիս ասելու, որ ջնարակման և նախշագարդման վերոհիշյալ ձևերը եղել են առավել նախնականը, որից հետո երևան են գալիս միագույն ջնարակած անոթները և «անդորով նկարազարդված» անոթները։ Կասկածից վեր է, որ նման զարգացում պետք է դիտվեր նաև Անդրկովկասի արհեստավորական այլ կենտրոններում, որոնք սերտ կապերի մեջ էին Դվինի հետ[4]։

Բազմագույն ջնարակած թասերը հանդես են գալիս երկու ձևով՝ փոքր, հարթ հատակով, ուղիղ կտրված պսակով (ՊՊԹ 2326/29, 30, չափերը՝ բերանի տրամագիծը՝ 10,5—11 սմ, բարձր.՝ 3,5—4,5 սմ, հատակի տրամ.՝ 4,5—5,5) և մեծ օղակավոր նստուկով, կլոր պսակ, վերին մասում ուղիղ պատեր ունեցող պնակներով (ՊՊԹ 2326/1, չափերը՝ 20, 6,5, 10 սմ)։ Զարդանախշումը հիմնականում երկրաչափական է և բուսական։ Ամենատարածված մոտիվը դարչնագույն և կանաչ գծերով արված քառակուսիների և շեղանկյունների մեջ կանաչ և դարչնագույն սլաքների զարդն է, որն անոթի ներքին մակերեսի վրա դասավորված է շախմատաձև։ Այս զարդամոտիվը լայն տարածում ունի Դվինում և հանդիպում է դեռևս նախորդ տարիների պեղումներից հայտնաբերված նյութերի մեջ[5]։ Կարելի է վստահորեն ասել, որ այդ մոտիվը զուտ տեղական էր և Դվինի խեցեգործ վարպետների գեղարվեստական մտահղացման արդյունք։ Սլաքաձև զարդերը, որ այնքան լայն տարածում ունեին Դվինի ջնարակած խեցեղենի վրա IX դարում, հետագայում անհետանում են, իրենց տեղը զիջելով ավելի բարդ կոմպոզիցիոն նկարների։

Անդրկովկասյան հուշարձաններում նման զարդով խեցեղեն շատ քիչ քանակությամբ հայտնի է Օրեն-Կալայից (Փայտակարան)[6], որը թվագրվում է X դարով։ Սլաքաձև զարդով խեցեղեն որոշ քանակությամբ կա միջինասիական հուշարձանների նյութերում։

Դվինում մասսայական է նաև դարչնագույն գծերով քառակուսիների մեջ դեղին պուտերով զարդամոտիվը։ Վառ դեղին գույնը առանձնակի շքեղություն է հաղորդում անոթին։

Վաղ տիպի ջնարակած անոթների զարդամոտիվների համար բնորոշ է կոմպոզիցիան կետազարդերով շրջապատելը կամ տարբեր ֆոնները կետազարդերով լցնելը։ Կետազարդերը հիմնականում դարչնագույն են, երբեմն՝ կանաչ։ Երկրաչափական զարդերից հայտնի են նաև տարբեր տիպի ցանցերը, կատարված կանաչ և դարչնագույն գծերով, շեղանկյունիները, սիմետրիկ զարդերը և այլն։

Բուսական զարդերի մեջ առանձնակի տեղ են բռնում վարդյակները և ոճավորված ծաղիկները։ Նրանց եղրագծերը հիմնականում տրվում են դարչնագույնով, իսկ ներսի մասը հարստացվում է դեղին և կանաչ տարբեր տիպի զարդամոտիվներով։ Սիրված մոտիվներից մեկը սուր ծայրով վերջացող ոճավորված արմավենու պատկերումն էր (արմավենազարդ)։

Հարուստ նախշեր ունի 2326/1 պնակը (աղ. 1,1)։ Ներսի մակերեսը պատած է երկրաչափական և բուսական ներդաշնակ զարդերով։ Զարդն իրենից ներկայացնում է մի հավասարաթև խաչ, որի կենտրոնում, կրկնակի դարչնագույն օղակներով արված շրջանի մեջ, պատկերված է ոճավորված ծառ, որի ֆոնը հարստացված է վառ դեղին պուտերով և դարչնագույն փոքր կետերով։ Խաչի թևերի միջև արված են ձվաձև շրջաններ, որոնք կանաչ գծերով բաժանված են քառակուսիների, իսկ քառակուսիների մեջ ներդրված են դարչնագույն կետերով շրջապատված դեղին խալեր։ Դեղին և կանաչ գույների համադրությունը անոթին շքեղ

---

[4] Н. Наджафова, Б. Шелковников, Художественная глазурованная керамика Азербайджана IX века, Известия АН Аз. ССР, сер. общ. наук, 1958, № 4. Պետք է նշել, որ հեղինակները Ադրբեջանի տերիտորիայի վրա հայտնաբերված IX դարի խեցեղենի քննության ժամանակ աչքաթող են արել այս կարևոր տիպը, այդ համարելով լոկ անդորով պատած բազմագույն ջնարակած անոթների տարատեսակ։ Տեղին է նշել, որ IX—X դդ. նման խեցեղեն տարբեր զարդանախշերով հայտնի է Օրեն-Կալայի համապատասխան շերտերից (տե՛ս Ա. Լ. Յակոբսոնի նշված աշխատանքները) և նրա ուսումնասիրություններ մյուս խմբի հետ ամրողջական պատկեր կստեղծեր։

[5] Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 209—210, նկ. 189։ Զվարթնոցի թանգարանում ցուցադրված խեցեղենի մեջ նույնպես առկա են հիշյալ զարդամոտիվները, տե՛ս Գ. Կարախանյան և Ա. Քալանթարյան, Զվարթնոցի խեցեղենը «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 4։

[6] А. Л. Якобсон, Художественная керамика Баилакана, էջ 239։

տեսք է հաղորդում։ Պնակն արտաքուստ ունի դարչնագույն պուտիկներ (աղ. I, 3)։ Նման պուտիկներով ջնարակած թասի մի բեկոր հայտնաբերվել է 1966 թ. պեղումների ժամանակ։ Անոթի արտաքին մասը դարչնագույն պուտիկներով զարդարելը նույնպես բնորոշ է Դվինի IX դարի ջնարակած խեցեղենի համար և հետագայում չի հանդիպում։

Կենտրոնական թաղամասում հայտնաբերված խեցեղենի մեջ ուշադրության են արժանի անոթի մի կափարիչ և սափորի ստորին մասը, որոնք երկգույն զարդարում ունեն։ Կափարիչը (ՊՊԹ 2326/2) գրեթե կիսագնդաձև է, վերին մասում բռնակ ունի (աղ. I, 4)։ Արտաքին ամբողջ մակերեսը պատած է դարչնագույն պուտիկներով։ Կափարիչի վրա համաչափ կերպով դասավորված են 4 միանման ոճավորված բուսական զարդեր, որոնց վերին և ստորին մասերում կան դեղնավուն պուտեր (խալեր)։

Սափորի ստորին մասը (ՊՊԹ 2326/20) ծածկված է ուղղահայաց, դեպի հատակը իջնող դարչնագույն գծերով, որոնց միջև մեկ ընդ մեջ դրված են կանաչ կետազարդեր։ Անոթը պատած է թափանցիկ ջնարակով։ Սափորի վերին մասն ըստ երևույթին ունեցել է ճոխ հարդարանք։ Այդ են ցույց տալիս պահպանված որոշ մանրամասները (աղ. I, 5)։

Միագույն ջնարակած խեցեղենը ներկայացված է հինգ տարբեր անոթներով։ Ջնարակը մուգ կանաչ է (պղնձի օքսիդ)։ Պատրաստման եղանակով և իր նրբությամբ աչքի է ընկնում 1965 թ. գտնված տափաշիշը (ՊՊԹ 2326/21)։ Այն ունի կլոր իրան, համեմատաբար երկար վիզ, ինչպես նաև ելուստաձև երկու կանթ՝ անոթը թելով կախելու համար (աղ. II, 1)։ Բարձր.՝ 15,5 սմ, իրանի տրամ.՝ մոտ 11 սմ։ Անոթն իր արտաքին տեսքով մերձենում է անտիկ շրջանի տափաշշերի ձևերին։ Այն թերևս պատկանել է եկեղեցական սպասների թվին, քանի որ հիշեցնում է Բյուզանդական կայսրության սահմաններում V—VI դդ. լայն տարածում ստացած պաշտամունքային անոթամպուլաների ձևերը[7]։ Անդրկովկասյան ժամանակամերձ հուշարձաններում Դվինի տափաշշի ուղղակի զուգահեռներ մեզ հայտնի չեն։ Տափաշշերն այդ շրջանում լայն տարածում ունեին Միջին Ասիայում, բայց կիրառական այլ նշանակությամբ։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում օղակաձև ցածր նստուկով և ուղիղ պատերով գավաթը (պահպանվել է 2/3 չափով)։ Բարձր.՝ 11 սմ, բերանի տրամ.՝ 11 սմ, հատակի տրամ.՝ 7 սմ։ Անոթի իրանի կենտրոնական մասով շուրջանակի անցնում է ակոս (աղ. II, 3)։ Ջնարակումը կատարված է միայն արտաքին կողմից։ Կավը դեղնավուն է, մանրահատիկ։ Հիշատակության արժանի է վաղ միջնադարյան ծագում ունեցող մի գավաթ, նույնպես գտնված կենտրոնական թաղամասում (ՊՊԹ 1905/67), որն ուղակիորեն կրկնում է վերոհիշյալ անոթի ձևը։ Այս երևույթը խոսում է այն ուժեղ ավանդույթների մասին, որը գոյություն ուներ Դվինում արհեստագործական արտադրանքի բնագավառում։ Նման տիպի մի անոթ հայտնաբերվել է Սամառայում (Արաբական խալիֆաթի մայրաքաղաքը 836—883 թթ., գտնվում էր Միջագետքում՝ Բաղդադի մոտ) և նույնպես թվագրվում է IX դարով[8]։

Շատ հետաքրքրական է ՊՊԹ 2326/23 անոթը, որի վրայի զարդամոտիվը կատարված է հավանաբար փայտի փորագրության անմիջական ազդեցության ներքո։ Դա շրջանաձև, հարթ հատակով, 4,5 սմ բարձրությամբ մի անոթ է, որի արտաքին կողմում, վերին մասում շրջանաձև տրված է եռանկյունաձև երկշարք փորագիր զարդ, իսկ ստորին մասում՝ եռանկյունիների և բազմանկյունիների միախառնված փորագիր զարդագոտի (աղ. II, 6)։ Կավը կարմրավուն է։ Նման անջնարակ մի անոթ գտնվել է նույն տեղից և նույնպես թվագրվում է IX դարով։ Այստեղ զարդն ավելի կատարյալ է և բազմազան[9]։ Նույն տիպի երկրաչափական զարդերով անոթներ հայտնի են Օրեն-Կալայից, որոնք Ա. Լ. Յակոբսոնի կողմից թվագրվում են XII դարով[10]։ 1957 թ. Օրեն-Կալայից IX—X դդ. շերտերում գտնվել են կանաչ ջնարակով և նույն զարդամոտիվներով մի քանի անոթների բեկորներ[11]։ Զարդանախշման այս եղանակը, ըստ երևույթին, լայն տարածում ուներ արդեն IX դարում։ Փորագիր զարդերով մի քանի անոթներ հանդիպում են Սամառայում[12]։

---

7 Այդպիսի մի ամպուլա է գտնվել Դվինում, տե՛ս Ա. Ա. Քալանթարյան, Պաշտամունքային անոթ Դվինից, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1965, № 2։

8 F. Sarre, Die Ausgrabungen von Samarra, Band II, Die Keramik von Samarra, Berlin, 1925, էջ 21։

9 Տե՛ս А. А. Калантарян, Раскопки центрального квартала Двина в 1964 и 1965 гг.

10 А. Л. Якобсон, Художественная керамика Байлакана, էջ 282—286, աղ. XXXVII, 2, 2а, 3, 4։

11 А. Л. Якобсон, Археологические исследования..., էջ 17—18, նկ. 8։

12 F. Sarre, Նշվ. աշխ., աղ. V.

Միագույն կանաչ ջնարակով մյուս երկու անոթներից մեկը կաթնամանի բեկոր է, ծորակով, հատակը չի պահպանվել։ Անոթի պսակը տափակ է, բիչ գեպի ներս թեքված։ Միագույն անոթների մեջ ուշադրավ է նույն շերտում գրտնրված թասը, որն իր նստուկի և ընդհանրապես արտաքին ձևով կրկնում է բազմագույն ջնարակած թասերի մեծ օրինակները (պահպանվել է 1/3 չափով)։

Վերոհիշյալ միագույն կանաչ ջնարակով անոթների բնությունը ցույց է տալիս, որ Դվինում արդեն IX դարում ջնարակած խեցեղենի արտադրությունը դարձել էր բազմակողմանի։



Աղ. II

Նման խեցեղենի առկայությունը Անդրկովկասյան ժամանակակիցներ հուշարձաններում կասկած չի հարուցում։ Առանձին օրինակներ հայտնի են Օրեն-Կալայի և Թբիլիսիի IX—X դդ. շերտերից։ Հավանաբար նման զարդանախշումն

աղբյուրներ ունի սասանյան ջնարակած անոթների հետ, որոնք գերազանցապես հանդես են գալիս կանաչ ջնարակով։

Անգորով նկարազարդված ջնարակած խեցեղենի առանձին բեկորներ են հայտնաբերվել պեղումների բուն շերտից։ Դրանց ուսումնասիրությունը կարևոր տեղ է գրավում Անդրկովկասի IX դարի ջնարակած խեցեղենի քննության մեջ։ Թասերի գարդերն արված են ապիտակ անգորով և ծածկված թափանցիկ կամ դեղնա-կանաչավուն ջնարակով։ Ռ. Առաքելյանը իրավացիորեն նկատել է, որ ջնարակման այդ ձևը «նկարազարդում անգորով», Հայաստանում, մասնավորապես Դվինում, հանդես է գալիս IX դարի վերջում և X դարի սկզբում[13]։ Դվինի անգորով նկարազարդված խեցեղենի ուսումնասիրությունը երևան է բերում մի շարք ձևեր, առավելապես նկարազարդում անմիջապես խեցու վրա և նկարազարդում խեցու գույնին մոտ ֆոնի վրա։

Պետք է նշել, որ Ն. Նաջաֆովայի և Բ. Շելկովնիկովի հայտնած այն կարծիքը, թե անմիջապես խեցու վրա անգորով նկարազարդված խեցեղենը գտնվել է միայն Ադրբեջանում, իսկ Դվինում ընդհանրապես չի հանդիպում[14], պարզապես պեղումների վերջին տարիների արդյունքներին նրանց անտեղյակության հետևանք է։ Հենվելով հնագիտական նյութերի շերտագրական և բաղդատական խոր ուսումնասիրության վրա, Ա. Յակոբսոնը նշում է, որ անգորով նկարազարդված խեցեղենը լայն տարածում ուներ ինչպես Ադրբեջանում, այնպես էլ Վրաստանում ու Հայաստանում (Դվին)[15]։

Կենտրոնական Թաղամասում հայտնաբերված հիշյալ խեցեղենի նմուշների զարդերը կատարված են սպիտակ անգորով, պատած են թափանցիկ ջնարակով (աղ. II, 2, 7)։ Բեկորներից երկուսի ֆոնը բաց շագանակագույն է, որի վրա ցայտուն երևան են գալիս սպիտակ գծերը։ Զարդերի մի մասը պուտիկներ են, հանդիպում են նաև շրջակենտրոն ավելի բարդ զարդամոտիվներ։

Կարևոր է խեցեղենի թվագրության հարցը։ Բոլոր ուսումնասիրողներն անգորով նկարազարդված անոթները համարում են միջնադարյան ջնարակած խեցեղենի ամենավաղ տիպերը և թվագրում են IX դարով։ Դվինում անգորով նկարազարդված անոթները գերազանցապես հայտնաբերվում են X դարի շերտում։ Շատ հավանական է, որ այդ տիպը երևան է գալիս IX դարի վերջում, անմիջապես եռագույն ջնարակած թասերից հետո։ Անգորով նկարազարդումը ջնարակած խեցեղենի զարդարման մեջ կարող էր տեղ գտնել միայն այն դեպքում, երբ անգոբն արդեն լայն կիրառություն ստանար և օգտագործվեր տարբեր նպատակներով։ Այդ առումով «նկարազարդում անգորով» ձևը տեխնիկական տեսակետից մի քայլ առաջ էր, քան նախորդ ձևերը։

Կենտրոնական Թաղամասում հայտնաբերված ջնարակած խեցեղենի հավաքածուում կան երկու փոքր, նետ ծալված շուրթերով ծանծաղ թասեր, որոնք ամենայն հավանականությամբ միջագետքյան IX դարի խեցեղենի ընդօրինակություններ են։ Երկուսի ներքին մակերեսը պատած է կաթնավուն ջնարակով, որը ֆոն է ստեղծում զարդերի համար։ Զարդերը գրեթե իմիտացիա են։ Թվում է, թե նրանք նույնպես ներմուծված են, սակայն մանրաղնին քննությունը երևան է բերում որոշ տարբերություններ։ Նախ ջնարակն իր որակով զիջում է ներմուծված օրինակների նույնանման ջնարակին և ավելի խամրած տեսք ունի։ Երկրորդ, և ամենակարևորը, խեցին իր գույնով և որակով լրիվ տարբերվում է ներմուծվածներից և համապատասխանում է Դվինի անոթների խեցու գույնին։ Մնում է միայն նշել, որ տվյալ անոթները պատրաստված են կաթնավուն, խուլ ջնարակով պատած ներմուծված թասերի անմիջական նմանողությամբ, նրանց տեղական ընդօրինակություններն են և նույնպես թվագրվում են IX դարով (աղ. II, 4, 5)։

Խեցեղենի ներմուծման հարցի պարզաբանման տեսակետից Մերձավոր Արևելքի խեցեղենը ուսումնասիրելիս բացառիկ նշանակություն են ստանում Դվինում հայտնաբերված օտար ծագում ունեցող անոթները։ Իհարկե, դա առաջին հերթին խոսում է Դվինի առևտրական լայն կապերի մասին։ Վերջին տարիներս կենտրոնական Թաղամասում հայտնաբերվել է Սամառայից ներմուծված անոթների մի խումբ։ Անոթների մակերեսային համեմատությունը Սամառայից գտնված այլ առարկաների հետ և դրանց տեխնոլոգիական առանձնահատկությունները խոսում են նրանց միջագետքյան ծագման օգտին[16]։ Ներմուծված առարկաները ներկայացված են մեկ ամբողջական պնակով, մի քանի թասերով և բազմաթիվ բեկորներով։ Այդ

13 Ռ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 235։

14 Н. Наджафова, Б. Шелковников, նշվ. աշխ., էջ 97։

15 А. Л. Якобсон, Художественная керамика Байлакана, էջ 232 և 236։

16 Սամառյան ծագում ունեցող անոթների վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս Б. Шелковников, Художественная керамика Двинских раскопок, «Известия» Арм. ФАНа, 1940, № 4—5.

անոթներն ունեն փափուկ, բաց դեղնավուն խեցի, որով առաջին հերթին տարբերվում են Դվինի տեղական արտադրանքից։ Անոթները պատած են կաթնավուն անթափանցիկ ջնարակով, որը հնշտությամբ պոկվում է խեցու վրայից։ Ջնարակապատումը կատարվել է անմիջապես թաց խեցու վրա և հետո այն թրծվել է։ Այս ամենը հատուկ է Սամառայի խեցեղենին և վերստին հաստատում է նրանց արտադրության վայրը։ Թասերն ունեն շատ բնորոշ ձևեր. դերազանցապես խորն են, դուրս փռված պսակներով, հենվում են օղակավոր ցածր նստուկի վրա։ Անոթների մեծ մասը զարդարուն է, որ կատարված է կոբալտով։



Աղ. III

Ուշադրության է արժանի ՊՊԹ 2326/29 պնակը, որի ներսի մակերեսին, կաթնավուն ֆոնի վրա կանաչ կոբալտով վերարտադրված է ոճավորված նռան ճյուղը, կենտրոնից հեռացող զույգ պտուղներով (աղ. III, 1)։ Պնակի շրթի վրա արված են հավասար հեռավորության վրա գտնվող երեք զույգ կետեր։ Անոթի մշակումը և նախշազարդումը կատարվել է մեծ հմտությամբ։ Նման զարդով՝ կենտրոնում մեկ նռան պտուղով և ոճավորված տերևներով, անոթ հայտնի է Շոշից (ներկայումս պահպանվում է Լուվրում)[17]։

Նույն տիպի (զուտ արտաքին նմանությամբ) մի թաս հայտնաբերվել է 1964 թ. (ՊՊԹ 2305/24)։ Այստեղ զարդն արդեն այլ ձևի և գույնի է։ Անոթի կենտրոնում, ներսից, կապույտ կոբալտով նկարված են ոճավորված տերևներ, իսկ շուրթին՝ նախորդ թասի նման արված են կապտավուն ցայտեր (աղ. III, 4)։ Ընդհանրապես այս երկու անոթներն իրենց արտաքին ձևով և զարդարման եղանակով, հատկապես երկրորդը, մոտենում են 1938 թ. Դվինում, նույն տեղամասում գտնված նույնատիպ թասին (ՊՊԹ 1617/124)[18]։ Ուշ-

[17] R. Koechlin, A propos de la ceramique de Samarra, „Syria", 1926, vol. 7, fasc. 3, pl. XLI, 2.

[18] Б. А. Шелковников, Художественная керамика Двинских раскопок, էջ 192—194, նույնի՝ Средневековая художественная керамика Ближнего и Среднего Востока, «Известия» Арм. ФАНа, 1942, № 5 (20), էջ 6, Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., նկ. 206։

զակի զուգահեռները հանդիպում են Միջագետքի խեցեղենի հավաքածուներում[19]։

Կենտրոնական Թաղամասում հայտնաբերվել են նման տիպի անոթների բազմաթիվ բեկորներ։ Նույն տիպի Թասերից մեկը (հատակը բացակայում է) եզրերին կրում է կապույտ ցայտեր (աղ. III, 2)։ Անոթների ձևերի տեսակետից հետաքրքրական է սկահակը (աղ. III, 3), որը ծանծաղ է, չունի հենահատակ և զուրկ է նախշազարդումից։ Սկահակի եզրերը շեշտված կերպով դուրս հն թեքվում (գտնվել է բեկորներով, պահպանվում է Դվինի հնագիտական բազայում)։ Նույնատիպ անոթներ են հայտնաբերվել Սամառայում և հայտնի են իրենց հոխ հարդարանքով[20]։

Թասերի բեկորների մեջ առանձնանում է մի օրինակ, որը զարդարման տեսակետից ոչ մի նմանություն չունի վերոհիշյալ Թասերի հետ, սակայն խեցու նույնությունը և ջնարակի պոկվելու հատկությունը մեզ թույլ է տալիս այն ևս ընդգրկել ներմուծված առարկաների շարքը։ Բեկորը նախշազարդված է երեք գույնով՝ կապույտ, մանիշակագույն և կանաչ։ Զարդն արված է դեպի կենտրոնը ձգվող երեք գույների ներդաշնակ շերտերով։ Նման տիպի մեկ ամբողջական Թաս գտնվել է նույն Թաղամասում 1947 թ. (ՊՊԹ 1847/59) և նույնպես թվագրվում է IX դարով[21]։ X դարով է թվագրվում միջագետքյան ծագում ունեցող նույն զարդերով ամբողջական Թասը, որը հրատարակվել է Ա. Լեյնի կողմից[22]։

Հիշյալ խեցեղենի գյուտերն անդրկովկասյան հնավայրերում շատ քիչ են։ Նման խեցեղեն, որը նույնպես միջագետքյան ծագում ունի և ներմուծվել է Սամառայից, վերջին տարիներս սակավ քանակությամբ հայտնաբերվել է Օրեն-Կալայում[23]։

1965 թ. Դվինում գտնվեցին մի պնակի բեկորներ (շրթնամասերը), որոնք, զարդանախշից դատելով, պատկանում են շողյուն խեցեղենի արտադրությանը, բայց միաժամանակ իրենց պարզ ձևերով տարբերվում են նույնատիպ խեցեղենի ավելի դասական օրինակներից (XII—XIII դդ.), որոնք մեծ քանակությամբ գտնվել են Դվինում և Անիում։ Վերոհիշյալ անոթը ներքուստ և արտաքուստ ունեցել է ճոխ զարդարում։ Այն պատրաստվել է մանրահատիկ դիզնավուն կավից և բարակապատ է։ Ներսից՝ ամբողջ եզրով արված են կլոր շրջանակներ, որոնց մեջ տեղադրված են երկգույն կարմիր և դարչնագույն օղակներ (աղ. III, 5)։ Այս ամենը վերցված է ոսկեգույն և կարմրավուն կետերի և մանր սլաքների մեջ, որոնք ընդհանուր ֆոն են ստեղծում։ Անոթի եզրերը շրջանակված են ոսկեգույն երիզներով։ Բեկորները, ըստ գտնվելու վայրի, թվագրվում են IX դարի վերջով կամ X դարի սկզբով։

Շողյուն խեցեղենի արտադրության ժամանակի և տեղի հարցը վիճաբանությունների առարկա է դարձել մերձավոր-արևելյան խեցեգործության խոշոր գիտակների և ուսումնասիրողների մոտ, սակայն այդ հարցում վերջնական պարզություն չի մտցված։ Նրանց մի մասը շողյուն խեցեղենի արտադրության հավանական կենտրոն համարել է Իրանը (Վիգնիեր, Պեղարդ, Միգեոն, Կյոխլին և ուրիշներ), մյուսներն առաջ են քաշել հռոմեա-եգիպտական լինելու տեսությունը (Բուտլեր, Ալի Բեյ Բագհատ և այլն), մեկ այլ խումբ պատրաստման կենտրոն համարել է Միջագետքը (Զառե, Կյուհնել, Դիմանդ, Լեյն և ուրիշներ)։ Սամառայում թրծման հնոց և խոտան չի գտնվել, սակայն Ռեյում, Էրիխ Շմիդտի պեղումների ժամանակ խոտան է գտնվել (Բոստոնի արվեստի թանգարանի և Ֆիլադելֆիայի համալսարանի միացյալ արշավախումբ)[24]։ Արաբ աշխարհագիր Իբն ալ-Ֆակիհը նշում ունի IX դարում Ռեյում «ոսկեզօծ անոթների» առկայության վերաբերյալ։ 1927—1928 թթ. Ունվալայի կողմից Շուշում բացվել են թրծման հնոցներ շողյուն խեցեղենի բեկորներով և եռոտանիներով (IX դար)[25]։ Ինչպես տեսնում ենք, նյութերը շատ հակասական են և իրավացի կերպով բանավեճեր են առաջացնում, սակայն մի բան պարզ է, որ արդեն IX դարում հիշյալ

---

[19] F. Sarre, նշվ. աշխ., աղ. XVIII, 4. 167; Arthur Lane. Early Islamic pottery, London, 1947, նկ 8 B; A. U. Pope, Ceramic Art In Jslamic Times. A History. A survey of Persian art, New-York, 1938—1939, հատ. V, աղ. 573 e.

[20] F. Sarre, նշվ. աշխ., աղ. XXVI–XXVII.

[21] Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., նկ. 198, Б. Шелковников, Керамика и стекло из раскопок гор. Двина, էջ 198։

[22] A. Lane, նշվ. աշխ., նկ. 7B։

[23] А. Л. Якобсон, Художественная керамика Байлакана, էջ 245—246։

[24] A. U. Pope, նշվ. աշխ., էջ 1462։ Նույնի՝ Identification of Iranian Faience, «III Международный Конгресс по Иранскому искусству и археологии», М.—Л., 1935, էջ 175։

[25] J. M. Unvala, Note on the Lustred Ceramics of Susa. Bulletin of the American Institute for Persian art, № 2, 1939, 79.

տեխնիկան նկատելի բարձրության վրա էր գտնվում։

Սողյուն խեցեղենի արտադրությունը Մերձավոր Արևելքում, ինչպես հայտնի է, տալիս է խոշոր ընդմիջում և նորից երևան է գալիս XII դարի երկրորդ կեսում, ավելի կատարյալ ձևերով։ Այս տիպի ամենավաղ անոթներից մեկը թվագրվում է 1179 թվականով և պահվում է Բրիտանական թանգարանում։ Կյուհնելն այդ ընդմիջումը բացատրում է նրանով, որ խալիֆաթի անկումից հետո արհեստավորների մի խումբ, որի ձեռքում էր կենտրոնացված Սողյուն խեցեղենի արտադրությունը և որոնք հավանաբար խստագույնս թաքցնում էին նրա պատրաստման գաղտնիքը, տեղափոխվում է Եգիպտոս, ուր աշխատանքային ավելի հարմար պայմաններ կային Ֆաթիմյանների արքունիքում։ Ֆաթիմյանների անկումից հետո, 1170-ական թթ. նրանք թողնում են Եգիպտոսը և հիմնավորվում Ռեյում (Պարսկաստան), Ռաքքայում (վերին Միջագետք) և Իսպանիայում։ Այս միտքը պաշտպանություն է գտնում Լեյնի կողմից[26]։

Դվինի Սողյուն անոթի բեկորներին նույնատիպ խեցեղեն մեզ հայտնի է Անտիոքի ալ-Մինա քաղաքի պեղումներից[27]։ Նման տեխնիկայով զարդարված անոթներ հանդիպում են նաև Սամառայում։ Դվինում հայտնաբերված Սողյուն թասի բեկորներն իրենց գարդամոտիվներով և գույներով բաղդատվում են Ֆուստատում (Եգիպտոս) հայտնաբերված խեցեղենի հետ։ Ռ. Շնեյդերը Ֆուստատի նմանօրինակ խեցեղենը թվագրում է 880—900 թթ.[28], որին մենք լիովին համաձայն ենք։ Սողյուն խեցեղենի բազմապիսի գյուտերը Ֆուստատում խոսում են այն մասին, որ այս քաղաքը եղել է նրա արտադրության կենտրոններից մեկը։ Շատ հավանական է, որ Դվինի անոթը ներմուծված լինի Եգիպտոսից։

Այսպիսով, Դվինի IX դարի ջնարակած խեցեղենն աչքի է ընկնում պատրաստման, անոթների ձևերի և զարդարման բազմազանությամբ։ Իր արտադրությամբ Դվինը քայլել է Մերձավոր Արևելքի արհեստավորական կենտրոնների հետ համընթաց և գրավել է առաջնակարգ տեղերից մեկը։ Ջնարակած խեցեղենի արտադրության բնագավառում Դվինը եղել է Անդրկովկասի խոշորագույն կենտրոններից և իր նկատելի կնիքն է թողել այլ կենտրոնների արհեստային արտադրանքի վրա։ IX դարում Դվինը առևտրական և մշակութային սերտ կապերի մեջ է եղել Մերձավոր Արևելքի, Եգիպտոսի և այլ երկրների հետ։

Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ԼՈՌԻ ԲԵՐԴԻ № 2 ԴԱՄԲԱՐԱՆԻ ՈՍԿԵ ԵՎ ԱՐԾԱԹԵ ԶԱՐԴԵՐԸ

1969 թ. օգոստոսին Ստեփանավանի շրջանի Լոռի Բերդ գյուղում պեղվեց մի հարուստ, հիմնահողային դամբարան, որն ուղղված էր հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք։ Այն ծածկված էր հսկա սալաքարերով, ուներ 5,80 մ երկարություն, 2,35 մ լայնություն և 2,45 մ խորություն։ Ծածկի քարերի տակ, երկու կողմերից տեղավորված էին միջին մեծության քարեր՝ սալաքարը պահելու նպատակով։ Ննջեցյալը տեղավորված էր դամբարանի կենտրոնում, լայնությամբ, կմախքը խիստ քայքայված էր։ Դամբարանի հարավ-արևելյան կեսում թաղված էին երկու ձիեր, որոնցից մեկի երախում երկաթե սանձ կար։ Հայտնաբերված նյութերի մեծ մասը տեղավորված էր դամբարանի հյուսիս-արևմտյան կեսում, դրանք էին՝ մոտ 45 կտոր խեցեղեն, այդ թվում պաշտամունքային անոթներ, բրոնզե բազմաթիվ ապարանջաններ, բոժոժներ, թրոչունների արձանիկներ, կոճակներ, ագաթից, հասպիսից և այլ քարերից պատրաստված բազմաթիվ գեղեցիկ ուլունքներ, շաղախե զարդեր, երկաթե կեռ դանակներ և այլն։

Առանձին հետաքրքրության արժանի են դամբարանում հայտնաբերված ոսկե և արծաթե զարդերը։ Սրանցից ամենահետաքրքիրը ոսկե ճակատազարդն է (դիադեմա), որն ունի 27,5 սմ երկարություն, 4,5 սմ լայնություն (ազ. I, նկ. 1)։ Այն ընկած էր կմախքից կես մետր հյուսիս, կոր դիրքով և հողի ճնշման տակ կորցրվել էր, բաժանվելով երկու անհավասար մասերի։ Ճակատազարդը պատրաստված է ոս-

[26] Arthur Lane, Medieval Finds at al Mina in North Syria, „Archaeologia", LXXXVII, էջ 29։

[27] Նույն տեղում, ազ. XVI, 1։

[28] R. Schnyder, Tulunidische Lüsterfayence, „Ars Orientalis", vol. V, էջ 78, ազ. 9, նկ. 45։